Կ.Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հ.Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում *(1941 – 1945թթ.)*, «Զանգակ – 97» հրատ., Ե., 2001, 128 էջ:

Ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ տասնամյա պատմություն ունեցող Հայաստանի Հանրապետության պատմագիտությունը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը՝ նրա լուսաբանմանը նվիրելով բազմաթիվ մենագրություններ, փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, հոդվածներ, հրապարակումներ և այլն: Այժմ այդ կարևոր թեմայի ուսումնասիրությունն ավելի հրատապ և արդյունավետ է դարձել, քանզի ԽՍՀՄ փլուզումից հետո գաղտնազերծվեցին հազարավոր արխիվային փաստաթղթեր, հատկապես ռազմական և ռազմապատմական, պետական ու կուսակցական կենտրոնական արխիվների կարևորագույն ֆոնդեր: Այս առումով պատմագիտության մեջ հաճելի նորություն է պատմական գիտությունների դոկտորներ Կլիմենտ Հարությունյանի և Հրաչիկ Մանուկյանի գրախոսվող աշխատությունը: Աշխատության կարևորագույն արժանիքներից մեկն այն է, որ գերազանցապես շարադրված է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական (Մոսկվայի մարզ, ք. Պոդոլսկ), Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության և Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվների տվյալների հիման վրա, որոնց զգալի մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Հեղինակներն օգտագործել են նաև ռազմաճակատային, միութենական մամուլի նյութերը, ինչպես նաև նախկինում և վերջին տարիների ընթացքում ԱՊՀ երկրներում լույս տեսած գրականությունը:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, վեց գլուխներից և վերջաբանից: Ներածության մեջ համառոտակի, բայց նոր նյութերի հիման վրա տրված են՝ պատերազմի նախօրյակին տիրող խիստ լարված միջազգային դրությունը, Եվրոպայի կենտրոնում և Հեռավոր արևելքում հիտլերյան Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի ռևանշիստական ուժերի կողմից պատերազմի օջախների ստեղծումը, որին հարեց նաև ֆաշիստական Իտալիան, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի թողտվական քաղաքականությունը, որից շատ ճարպկորեն օգտվեց Ադոլֆ Հիտլերը, Խորհրդային Միության կառավարության ձեռնարկած միջոցառումները՝ իր երկրի պետական սահմանների անվտանգության ապահովման ուղղությամբ, և, վերջապես, 1939թ. սեպտեմբերի 1-ին Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծումը, որի հետևանքով մինչև 1940թ. նոյեմբերը ֆաշիստական Գերմանիան զավթեց Լեհաստանի զգալի մասը, Դանիան, Նորվեգիան, Հոլանդիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը և Ֆրանսիան, իսկ 1941թ. հունվար-ապրիլին՝ Հունաստանը, Հարավսլավիան:

Առաջին գլխում, որը կրում է «Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում» վերնագիրը, նորահայտ փաստերի հիման վրա լուսաբանվել են պատերազմը սկսելու և առաջին մարտերի, ռազմամոբիլիզացիոն և ռազմապաշտպանական աշխատանքների կազմակերպման, ազգային ու համազորային դիվիզիաների ձևավորման և Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու հիմնահարցերը:

Պատերազմի առաջին օրերին աչքի ընկած հայ խիզախների կողքին նշված են նաև նոր անուններ. 6-րդ հեծյալ դիվիզիայի 94-րդ հեծյալ գնդի հրամանատար, փոխգնդապետ Նիկոլայ Պետրոսյանց, որը պատերազմի առաջին օրը թշնամու զերազանց ուժերի գրոհները հետ մղելիս զոհվեց հերոսաբար, 8-րդ տանկային դիվիզիայի 8-րդ հրետանային-զենիթային դիվիզիոնի հաշվարկի նշանառու, եֆրեյտոր Ավետիս Աղայան, որը 1941թ. հունիսի 22-ին դիպուկ կրակով ցած գցեց հակառակորդի «Յունկերս-88» ինքնաթիռը, 99-րդ հրաձգային դիվիզիայի 473-րդ հրետանային գնդի 1-ին մարտկոցի հրամանատար, կրտսեր սերժանտ Մուշեղ Բալայան, որն առաջին մարտերում խփեց ֆաշիստական 12 տանկ, ինչը պատերազմի առաջին շրջանի պատմության մեջ աննախադեպ երևույթ էր, և այլն:

Նորահայտ փաստերի հաշվումների հիման վրա ճշտվել է բանակ զորակոչվածների թիվը. միայն Խորհրդային Հայաստանից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 324384 մարդ, որից շուրջ 300 հազարը՝ հայեր: ԽՍՀՄ այլ հանրապետություններից բանակ զորակոչված հայերի թիվը կազմել է ավելի քան 200 հազար, իսկ արտասահմանից՝ շուրջ 100 հազար: Գաղտնազերծված արխիվային նյութերի հիման վրա տրված են Հայաստանում կազմավորված հայկական ու համազորային 13 դիվիզիաների ձևավորման պատմությունը և անձնակազմերի ազգային կազմը, բացահայտված է հանրապետության արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը ռազմական պայմաններին հանապատասխան վերակառուցելու աշխատանքների առանձնահատկությունը: Միայն պատերազմի տարիներին հանրապետությունում շահագործման հանձնվեցին 30 նոր ձեռնարկություն, 110 արտադրամաս, յուրացվեց 300 նոր արտադրատեսակների արտադրությունը (էջ 123): Գյուղատնտեսության աշխատողների ջանքերով պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին, այլև զգալի չափով աճեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը:

Երկրորդ՝ «Պատերազմի առաջին և երկրորդ շրջանների գլխավոր ճակատամարտում» գլխում լուսաբանվել են հայ ռազմիկների մասնակցությունը Մոսկվայի, Ստալինգրադի, Կովկասի և Կուրսկի ճակատամարտերին, ինչպես նաև Կերչի, Ղրիմի, Ուկրաինայի, Բելոռուսիայի ազատագրման, Մերձբալթյան Հանրապետությունների, Լենինգրադի, Կարելիայի և Խորհրդային Անդրբևեռի համար մղված մարտերին առնչվող հիմնահարցերը: Ընդ որում, Կարելիայի և Անդրբևեռի համար մղված մարտերին հայ ռազմիկների մասնակցության լուսաբանումը նորություն է հայ պատմագրության մեջ:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Ֆաշիստական լծից Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներն ազատագրողների շարքերում», կարևորվում է հատկապես այն առումով, որ հայ պատմագիտության մեջ առաջին անգամ առանձնաբար լուսաբանվում է Լեհաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Արևելյան Ավստրիայի և Չեխոսլովակիայի ազատագրման մարտերին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցը:

Չորրորդ գլխում, որը կրում է «Ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի ջախջախման մարտերում» վերնագիրը, բոլորովին նոր փաստերի հիման վրա բացահայտված է Արևելյան Պրուսիայի և Բեռլինի ճակատամարտերին, ինչպես նաև ճապոնական Կվանտունյան միլիոնանոց բանակի ջախջախմանը և Հյուսիս-արևելյան Չինաստանի ազատագրման մարտերին հայ ռազմիկների մասնակցությունը:

Հինգերորդ գլխում լուսաբանվել է ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում սփյուռքահայերի ավանդը, վերհանվել են պարտիզանական և դիմադրական

շարժման շարքերում նրանց կատարած սխրանքները, արխիվային նոր փաստերի հիման վրա տրվել է գերմանական բանակի Հայկական լեգեոնի համառոտ պատմությունը: Հեղինակները եկել են այն ճիշտ եզրահանգման, որ Հայկական լեգեոնի ստորաբաժանումները ոչ միայն չծառայեցին ֆաշիստական վերմախտին, այլև վերածվեցին խորհրդային պարտիզանների, ֆրանսիական, հոլանդական, հունական հակաֆաշիստական դիմադրական շարժումների համալրման աղբյուրների:

Վերջին՝ վեցերորդ գլխում ցույց է տրվել Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում, վերհանվել արդյունաբերության ու գյուղատնտեսության բնագավառների աշխատողների և մտավորականության հերոսական աշխատանքը, որի շնորհիվ հանրապետությունը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, Կարմիր բանակի մարտական դինանոցի, որտեղից «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ դնացքակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն:

Վերջաբանում ամփոփիչ թվական տվյալներ են բերվել Հայրենական մեծ պատերազմի հայ մասնակիցների՝ Խորհրդային Միության հայ հերոսների, փառքի շքանշանի լրիվ ասպետ հայ զինվորների և գեներալների, ծովակալների ու մարշալների, մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրվածների մասին և այլն: Այդ թվական տվյալների զգալի մասը նույնպես հայ պատմագրության մեջ շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Այդուհանդերձ, աշխատությունը զերծ չէ մասնակի թերություններից, որը մեր կարծիքով, արդյունք է համակարգչային շարվածքում նկատված բացթողումների (էջ 68), ազգանունների մեջ տառերի սղման (էջ 32, 34, 45), որի հետևանքով մասնակիորեն աղավաղվել են որոշ մարգկանց ազգանուններ և այլն: Ցանկալի կլիներ, որ գիրքն ունենար նկարագարդում, ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփում:

Այսպիսով, վստահ կարող ենք նշել, որ հայ պատմագիտությունը հարստացել է մնայուն ուսումնասիրությամբ, որը նկատելի քայլ է Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցի գիտական պատմության ամբողջացման ճանապարհին:

Գ.Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ